# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մեգաօֆիս ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | Գրապահարան՝ Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված կլինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, արտաքին չափերը՝ 820x410x2000մմ (LxԽxԲ): Գրապահարանը ունի 400մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 3-ը փակվում են եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 3 ծղնիներով, իսկ ներքևի 2-ը՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները կունենան մետաղական բռնակներ: Դարակները պատրաստված կլինեն լամինացված 18 մմ հաստության ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը կլինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն կիրականացվեն թաքնված ամրակցումներով: Գրապահարանի հետնապատը կլինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով կունենա շրջանակաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800x380x100մմ (LxԽx Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ 8մմ է: Ապրանքները կլինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ 365 օր: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները կշտկվեն տեղում /դետալների փոխարինում/ կամ կփոխարինվեն նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МЕГАОФИС ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |